1916)․ 1917ին Սահակ կթղ․ի հետ պետական որոշումով կը տարագրուի Դամասկոս․ Աւ․ Դամասկոսի (1917—1918)․ Նախագահ Վարչ․ Ժողովի (1919—1921)․ և 1920 դեկտ․ 5ին կը կատարէ Պէրութի Ս․ Նշան Եկեղեցիին օծումը։

Իր հրատարակութիւններն են․ Յուշեր եւ Նօթեր (1916—1920)․ (տպ․ Աղեքսանդրիա․ 1923)․ Յիշատակներ Բաղէշի Առաջնորդութեան (տպ․ Երուսաղէմ, 1925)․ Արձագանգ Զանազան Ազգ․ Անցուդարձերու (տպ․ Երուսաղէմ, 1925)․ Նկարագրութիւնք (1914—1918) (տպ․ Երուսաղէմ․ 1927)․ Արձագանգ Բ․ (1900—1918)․ (տպ․ Պէրութ․ 1927) Յուշք եւ Պատմականք երկու հատ․ (տպ․ Պէրութ․ 1928)․ Փնջիկ Բարոյական Առածներու եայլն․ (տպ․ Երուսաղէմ․ 1928)։

ԵՂԻՇԷ ՎՐԴ․ ՄԵՍՐՈԲԵԱՆ, ՎԱՆՑԻ․— Մբ․ Վարագայ վանքին․ և աշկ․ Խրիմեան Հայրիկի, 1866ին ուխտաւորութեամբ կ՚այցելէ Ս․ Յակոբի վանքը։

ԵՂԻՇԷ ՎՐԴ․ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԵԱՃՑԻ․— Մբ․ Ծ․ 1806ին․ աշկ․ Փօթուշանցի Գէորգ եպս․ի, Ձռ․ 1849ին․ Ժամօրհնող (1879—1685)․ Տթ․ 1857ին․ կը մեկնի Եաշ 1857ին․ կը վերադառնայ 1859ին․ կը վախճանի 1885ին։

ԵՍԱՅԻ ԱԲ․ ԱՄԲԱՐՁԵԱՆ ՆՈՐ — ՋՈՒՂԱՅԵՑԻ․— Մբ․ Ծ․ 1880ին, Ձռ․ 1925ին․ Ժամարար Յոպպէի 1926ին։

ԵՍԱՅԻ Ա․ Պն․ (1133—1152)․— Եսայի Ա․ի պահակալութեան թուականին պատմական կարեւոր դէպք մը տեղի ունեցած է, զոր հոս կը յիշատակենք, ազգային տեսակէտով շահեկան ըլլալուն համար․

A. Martin 1889ին, Les Premiers Princes Croisés' et les Syriens Jacobites de Jerusalem խորագրով գրքոյկի մը մէջ կը գրէ՝ թէ ինքը Լիոնի մատենադարանին մէջ գտած է ասորերէն ձեռագիր ժամագիրք մը, Մարաշցի Միքայէլի գրչութեամբ 1138ին, որ յիշատակարանի մը մէջ կը պատմէ թէ Յակոբիկ ասորիները Երուսաղէմի մօտ, ունէին բերդի նման վանք մը Պէյթ Արիֆ և Ադիսիկ անունով․ երբ Ֆրանկները Երուսաղէմի վրայ կը յարձակին ասորիները արաբներէն վախնալով՝ իրենց պատրիարքին հետ կը թողուն նոյն տեղերը և կը փախչին Եգիպտոս 1100ին։ Լատինք Երուսաղէմը կը գրաւեն, և գրաւողներէն մին էր Jeoffroy անուն Ֆր-